

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը
Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ

Աշխարհի բոլոր երեխաներն ունեն սիրո ու ջերմության կարիք, ինչն էլ վստահաբար
երկրի առողջ ապագայի գրավականն է:
Հունիսի 1-ը տարվա ամենաուրախ ու գեղեցիկ տոներից մեկն է:
Սիրելի՛ երեխաներ, ջերմորեն շնորհավորում եմ ձեզ՝ ձեր տոնի առթիվ: Թող
երջանկությունն ու խաղաղությունը մշտապես ուղեկից լինեն ձեզ, թող ձեր կյանքի
ամեն մի օրը լի լինի անսպառ ուրախությամբ, երգ ու խնդությամբ:
Իսկ մեր՝ ավագներիս պարտքն է անել ամեն հնարավոր բան մեր մանուկների
երջանկության ու բարեկեցիկ ապագայի համար:
Եվս մեկ անգամ շնորհավորում եմ բոլոր փոքրիկներին ու իրենց ծնողներին այս ջերմ
օրվա առթիվ և մաղթում անամպ երկինք ու բարեկեցիկ ապագա:
Թող որ պաշտպանված ու սիրված լինի աշխարհի ամեն մի մանուկ: